

գաղղիացի, գերմանական, սպանիացի եւ իտալական լեզուաց կազմութեանը վրայ, ասանկ ալ քանի մը խօսք գրուցեմք անգղիական լեզուին համար, որ այնպիսի մեծ եւ գեղեցիկ գրութեանք երեւցուց: Այսպէս կերպով մը բուն քարահանքին մէջ նկատած կ'ըլլանք մարմարիոնին բնութիւնը, քանի որ քարտար արուեստագիտին ձեռքին տակ գեղեցիկ արձան մը եղած չէ:

Ովկիան, որ այնպիսի ահաւոր պատուարով մը կը պատէ զԱնգղիա, կարող չէ եղած պաշտպանելու զինքը արտաքին յարձակումներէ: Ամէնէն առաջ Հոնով մը կը խրկէ հոն իր լեզուները...¹²:

Յաջորդաբար, կը տողանցեն Չօսըր, Մարու, Ճոնսըն. հուսկ կու գայ Շէյքսպիր. կը տրուի «Համլէթ»-ի վերլուծումը. մէջըրերումներ: Բնագրին վերջին երեք էջերը, ուր կը խօսուի Շէյքսպիրի կատակերգութիւններուն մասին, չկան Չարրհանալեանի մօտ. ատոնց տեղ՝ ներմուծած է «Յուլիոս Կեսար» ողբերգութեան վերլուծումը եւ դրած է Բրուտոսի նշանաւոր ճառախօսութիւնը, քաղելով 1853ի «Բազմավէպ»էն. ընդամենը երեք էջ. ու յանկարծ կ'աւարտի նիւթը, առանց վերջարանի: Mennechetի վերջաբանը, յայտնապէս Փրանսական, իր միակողմանի ու կծու շեշտով՝ հաւանաբար հաճոյ չէ անցած Հ. Գ. Չարրհանալեանի ու յապաւած է, անյարմար դատելով դայն՝ հայկական շրջանակներու:

* * *

Նկատմամբ Մ. Նարեանի վերջին հաւաստումին՝ վերջինը՝ մեր համադրումին մէջ՝ այս ներկայացումէն եւ ճշտումներէն ետք, մենք այլեւս չենք կարող ըսել՝ թէ Հ. Գարեգին Չարրհանալեան 1853-1891 զբաղած է Շէյքսպիրով, ու դայն դարձուցած է իր գուրգուրոտ ուսումնասիրութեան առարկայ: Ինչո՞ւ թուականի այս ճշտումները եւ երկրաչափական սահմանադրումները:

Ինչ որ որոշակի կրնանք ըսել, այն է՝ թէ Հ. Գարեգին Չարրհանալեան յայտնի դեր ունեցած է՝ Միլիթարեան ուրիշ Հայրերու կարգին՝ Շէյքսպիրը հայու-

թեան ծանօթացնելու հարկւրամեայ աշխատանքին մէջ, յատկապէս օտար դրականութիւններու ուսումնասիրութեան նուիրած իր թարգմանածոյ հրատարակութեամբ, որ լոյս տեսած է 1874ին: Այդ երկը, երկար տարիներ, ծառայած է իրր զատազիրք, հայադարձ անթիւ պատանիներու մէջ արծարծելով սէրն ու պաշտամունքը դեղեցիկին եւ դրականութեան: Իսկ ինք, բազմահմուտ դիտնականը, թէ՛ Ս. Ղազարու վանքին մէջ եւ թէ՛ Ռափայէլեան վարժարանին մէջ, Վենետիկ, տարիներով դասաւանդած է դրականութեան պատմութիւն եւ սերունդներ խանդավառած է Շէյքսպիրեան հզօր տիպարներով:

Կարելի է միաժամանակ եզրակացնել՝ թէ ինչքան բարձր մակարդակի վրայ էր, հարկէր տարի առաջ, օտար դրականութիւններու ծանօթութիւնը՝ մեր վարժարաններուն մէջ:

Եթէ երբեք թուականներ ճշտել հարկաւոր է, այն ատեն պէտք ենք ըսել թէ 1874ի ատեններն է՝ զլիաւորապէս՝ որ Հ. Գարեգին Չարրհանալեան զբաղած է Շէյքսպիրով:

Վերոյիշեալ դրքով, Հ. Գ. Չարրհանալեան այնքան է Շէյքսպիրադէտ (եթէ կարելի է տալ այս տիպոսը), որքան է նաեւ Տանթէպէտ, Պոստէպէտ կամ Վոլթէրադէտ...: Հ. Գարեգին Չարրհանալեան հին ու նոր դրականութիւններու, յատկապէս հայկականին, խոր ուսումնասիրողն է եղած. եւ անշուշտ իր համապարփակ մտքի հորիզոնին փայլուն աստղերէն մէկն էր Շէյքսպիրը:

Ձեռք կարծեք՝ թէ այս եզրակացութիւններով նսեմանայ Հայ շէյքսպիրագիտութեան վաստակաւոր ղեմքերէն մէկը, ոչ ալ անոր պայծառ զործունէութիւնը: Հ. Գարեգին Չարրհանալեան կը մնայ իր բարձր պատուանդանին վրայ, յաւիտարժանի մեր խորունկ երախտագիտութեան եւ բոլոր հայ շէյքսպիրագէտներու խանդավառ զնահատանքին:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

ՎԱՏԻԿԱՆԵԱՆ Բ. ԺՈՂՈՎԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵԿԵՂԵՅԻՆ

(Շար. տե'ս «Բազմավէպ» 1967, Բ. 6-8, էջ 160)

4. - Մարդը՝ ընկերութեան մէջ

Մարդկային զործունէութեան եւ յառաջադիմութեան հետ սերտօրէն շաղկապուած է ժամանակակից աշխարհի ուրիշ մէկ տեսակէտը. ընկերութեան յառաճուն աղբյուրները՝ անհատներու կեանքին մէջ: Անտարակոյս, ընկերութիւնը եղած է միշտ բնական միջավայրը սեւէ մարդու կազմութեան եւ զարգացումին: Մարդուն ընկերային հանգամանքն է, նաեւ, որ կ'որոշողը՝ մեծ մասով՝ անոր զործունէութիւնը: Բայց, այսօր, նոր յարաբերութիւններ կը հիմնուին անհատին եւ ընկերութեան միջեւ, որոնք թէ եւ աննախընթաց ծառայութիւններ կ'ընծայեն մարդկային արժանապատուութեան զնահատանքին, կեանքի պայուսումներու բարեփոխման, մշակութային մակարդակի բարձրացումին, բայց բոլորովին զերծ չեն որոշ երկդիմութիւններէ: Ժամանակակից աշխարհի մէջ, Վատիկանեան Բ. Ժողովին մատնանշած անհատարակչութիւնները՝ որոնց ակնարկեցինք, արդիւնք են մասամբ ընկերային նոր յորինուածքներու: Ընկերային կեանքի այս յեղաշրջումին առջեւ՝ Տիեզ. Ժողովը կ'առաջարկէ տեսութիւն մը, որ կը համընթանայ մարդուն արժանապատուութեան եւ զործունէութեան շուրջ հանդիսադրած ուղղութեան:

Ժողովին տեսութիւնը ղեկավարող հիմնական սկզբունքը՝ ընկերութեան յարա-

բերականութիւնն է, մարդկային անձին առնչութեամբ, եւ անոնց փոխադարձ կախումաւորութիւնը. փոխադարձութիւն՝ որ չ'իրականանար համասեռ (homogène) յարաբերութեամբ մը մէկ կողմէն եւ միւսէն:

Ընկերութեան արժէքը՝ իրրեւ հաւաքականութիւն՝ կը պայմանաւորուի մարդկային անձին. ընկերութիւնը սահմանուած է բացարձակապէս մարդուն ծառայութեան: Մարդը կը մնայ միշտ խորիւր, ենթական եւ վախճանը՝ ընկերային բոլոր կարգուսարքին: Փոխադարձաբար, մարդը կը կարօտի ընկերութեան, մանաւանդ այսօր, իր անձին ամբողջական իրազորմունքին համար:

Մարդուն այս վախճանական դիրքը՝ ընկերութեան առնչութեամբ, դայն չի փակեր ետսէր ինքնակերպողութիւն մը մէջ: Ընդհակառակն. կը բանայ անոր առջեւ ամէնէն աւելի վեհանք մարդասիրութեան ուղին: Ծառայութիւնը՝ զոր ան կը մատուցանէ ընկերութեան, կը դառնայ ոչ թէ անանուն հաւաքականութեան մը ծառայութիւն, այլ մարդուն ծառայութիւն: Այսպէս, ընկերային տարրը կ'ընդգրկէ մարդուն մը կեանքին բոլոր տարածութիւնները. յաւելեալ բան մը չէ՝ անոր անձնական զոյութեան վրայ. կը բխի անոր էութենէն: Մարդը կը գտնէ ընկերութեան մէջ իր անձին կատարելագործման ամէնէն բարձր արտայայտութիւններէն մէկը՝ բացուել մը ղէպի ու-

12. [Հ. Գ. ՉԱՐՐԻՆԱՆՈՎԵԱՆ], Պոստ. մտնգր. միջին եւ նոր դարուց... հտ. Ա. էջ 285:

ընդ, որ միանգամայն իր նմանն է: Մարդուն այս ընկերային բնույթը չի յատկանշեր միայն անոր բնական կեանքը, այն՝ որ կը բաղկանայ գէպի դուրս, գէպի իր շուրջը հայող յարաբերութիւններէն. կը թափանցէ անոր ներքին, կրօնական ապրումին մէջ: Կրօնքը ընկերային երեւոյթ մըն է ինքնին. բայց քրիստոնէութեամբ՝ կրօնքի ընկերային հանգամանքը դերազանց եւ ինքնատիպ բարձրութեան մը կը հասնի. ընկերոջ սէրը կը նոյնանայ՝ իրրեւ արժէք՝ աստուածային սիրոյն հետ, զոր շօշափելի կը դարձնէ, մինչ աստուածային Անձերուն անխղիւ միութիւնը նախատիպար կը կանգնի մարդոց միջեւ հաստատուելիք միութեան: Քրիստոս հիմնեց Եկեղեցին իրրեւ տեսանելի ընկերութիւն մը, որպէսզի մարմնաւորուին ըլլար այդ սիրոյն եւ միութեան:

Որպէսզի ընկերութիւնը կարենայ հասնի իր նպատակին, այսինքն՝ ծառայել մարդուն, իր առաջին պարտականութիւնն է՝ սատարել հասարակաց բարիքին: Անշուշտ այս պարտականութիւնը կը ծանրանայ հանրային իշխանութիւններուն վրայ, բայց անհրաժեշտութիւն մըն է՝ ամէն քաղաքացիի համար: Հասարակաց բարին կը սահմանուի իրրեւ ամբողջութիւնը այն ընկերային պայմաններուն, որոնք կը թոյլատրեն՝ ըլլա՛յ խումբերու, ըլլա՛յ անոնց իւրաքանչիւր անդամին, հասնի իրենց կատարելութեան՝ աւելի լրիւ եւ աւելի դիւրին ձեւով: Ժողովը կը հաւաստէ՝ թէ ընկերութեան այս տարրը օրէ օր աւելի հանրածաւալ ընդարձակութիւն մը կ'առնէ, իրաւունքներ եւ պարտադրութիւններ դնելով հանուր մարդկութեան վրայ, զանազան հաւաքակա՞նութիւններու փոխադարձ յարաբերութիւններուն մէջ: Ժողովը, թուելէ ետք մարդկային անձին քանի մը հիմնական իրաւունքները, ինչպէս՝ սնունդի, բնակութեան, զատարարութեան, աշխատանքի, բնապահութեան, կարծիքի եւ կրօնքի ազատութեան եւն... կը շեշտէ մասնաւորապէս կարգ մը գործնական հետեւանքներու կարեւորութիւնը. նախ՝

պատշաճ յարգանքն ու սէրը մարդկային անձին, նաեւ անոնց՝ որոնք տարբեր կերպով կը խորհին ու կը դործեն ընկերային, քաղաքական ու կրօնական ասպարէզներու մէջ. էական հաւասարութիւնը իրաւունքներու եւ պարտաւորութիւններու՝ բոլոր մարդոց միջեւ, առանց որեւէ խտրութեան սեռի, ցեղի, դոյնի, դասակարգի, լեզուի կամ կրօնքի. ստիպողական հանգամանքը՝ ընկերային արդարութեան ծաւալումին, եւ յատկապէս՝ էական անհրաժեշտութիւնը, որ կը զգացուի այսօր մէկըլի դնելու անհատապաշտ բարոյախօսութենէ ներշնչուած վարուելակերպ մը. եւ հոսով՝ կարեւորութիւնը ենթակարգեալներու գործօն եւ պատասխանատու մասնակցութեան՝ հասարակաց ձեռնարկներու եւ հանրային հաստատութիւններու կեանքին: Ուստի, Ժողովը կը մտադրէ որ ստեղծուին առակ պայմաններ խրախուսելու եւ ընդարձակելու՝ կարելիին չափ՝ այդ մասնակցութիւնը, հետեւելով յառաջագէտ աղբիւրու օրինակին: Այդ պայմաններէն առաջինն է, բնականաբար, բարձրացումը ընկերութիւններու մշակութային մակարդակին եւ բարձրացումը դաստիարակութեան մը՝ որ հիմնուած ըլլայ պատասխանատուութեան ըզգացումին վրայ:

Յիշատակութեան արժանի է նաեւ որ Ժողովը խիստ վերաբերում մը ցոյց կու տայ որոշ արարքներու հանդէպ, որոնք ոտնակոխ կ'ընեն մարդկային ամէնէն տարրական արժանապատուութիւնը. կեանքի գէժ գործուած ոճիւրներ, Ֆիզիքական կամ բարոյական խռտանդում, հոգեբանական ճնշումներ, տեղահանութիւն, ստրկութիւն, կիներու եւ պատանիներու վաճառաշահութիւն, գործաւորներու շահագործում, լոկ յարաբերութեան միջոցներու կարգին վերածելով զանոնք: Ժողովը, որ ջանք չէր խնայած խիստ լեզուէ մը զգուշանալու, ու մինչեւ իսկ անաստուածութեան վրդովիչ երեւոյթին դիմաց՝ տրամախօսելու եւ հակըցուելու անկեղծ փափաքով կը վարուէր, չի վարանիր հաստատել՝ թէ այդ-

պիսի ու նման արարքներ «ապականիչ են քաղաքակրթութեան, անարդանք են անոնց ենթակուողներէն աւելի՝ զանոնք կատարողներուն, եւ ծանր նախատինք մ'են Արարչին» (Gaudium et Spes, Ա. մաս, գլ. Բ., հմ. 27, դ.):

Ահա քանի մը կորիզային սկզբունքներ, զոր Ժողովը կը թելադրէ, որպէսզի մարդուն եւ ընկերութեան միջեւ ձեւացող նոր յարաբերութիւնները կարենան համապատասխանել՝ մարդուն ընկերային բնութեան հարազատ պահանջներուն: Անոնք արդի քաղաքակրթութեան նպատաւոր նոր աղբակ պիտի հանդիսանան, ինչպէս են արդէն բաղմաթիւ երկիրներու մէջ՝ աւելի կամ նուազ չափով՝ մարդկային անձնականութեան բարդաւաճումին հանձնարարութեան յարգանքներով: Ընկերութեան յարաճուն աղբեցումը՝ անհատներու կեանքին վրայ՝ պիտի չկլանէ մարդուն անձնականութիւնը, անանուն հաւաքականութեան մը զանդուածին մէջ:

Ժողովը հեռու է կատարելալ ընկերութիւն մը երազելու միամտութենէն, ուր ո'չ մէկ զեղծում գոյութիւն ունենայ, ուր կեանքի յեղաշրջումէն ծագող հարցերը կեանքի գործնական զեռնի վրայ միեւրոճուին գործնական լուծուել յոյն թափով՝ ինչպէս կրնան լուծուել մտքի տեսութեան մէջ: Իր դիտումն է՝ կոչ մը ուղղել հասարակաց գիտակցութեան՝ հրաւիրելու համար ամէնքը, որպէսզի լծուին՝ համոզումով ու եռանդով՝ այսքան լուրջ եւ անհրաժեշտ գործի մը: Նոյն մտահոգութենէն շարժած էր Նախագահ Ճոն Գեննըտի՝ երբ կ'ըսէր իր խաղա՜ ճոն Գեննըտի սկիզբը արտասուաշտօնաւարութեան սկիզբը արտասանած ճառին մէջ, իր առաջարկած ծրարին համար. «Այս բոլորը պիտի չաւարտին առաջին 100 օրերու ընթացքին, ո'չ ալ առաջին 1000 օրերուն, ո'չ այս կառավարութեան շրջանին, եւ զուգէ ոչ իսկ վարութեան շրջանին»: Այս խորհրդածութիւնթեան միջոցին»։ Այս խորհրդածութիւնները կը զօրեն մանաւանդ ընկերութեան մասնական հարցերուն շուրջ՝ Ժողովին թելադրած գործնական լուծումներուն նկատմամբ:

Ժողովը կը փակէ մարդուն ընկերային կոչումին նուիրուած այս գլուխը, ցուցադրելով թէ ան ո'րքան զմայլելի համապատասխանում մը կը գտնէ քրիստոնէական Յայտնութեան մէջ, որ զայն կը վըսեմացնէ ու կը դերնականացնէ: Ակնարկեցինք արդէն քրիստոնէութեան խորապէս ընկերային բնույթին. լրացնենք այդ նկատողութիւնները Ժողովին իսկ բառերով. «Այս հաւաքական նկարագիրը կը կատարելագործուի եւ կ'ամբողջանայ Յիսուս Քրիստոսի գործով: Որովհետեւ ինքն իսկ Աստուծոյ Մարդացած Բանը ուղեց մասնակից ըլլալ մարդկային կենակցութեան: ... Սրբացուց մարդկային կապերը, եւ յատկապէս ընտանեկան միութիւնը, որ մայրն է ընկերային կեանքին: ... Ուղեց վարել իր ժամանակին ու երկրին պատկանող արհեստաւորի մը կեանքը: Իր քարոզութեան մէջ՝ յատկօրէն հաստատեց թէ Աստուծոյ որդիները պարտական են իրարու հետ իրրեւ եղբայր վարուել: Իր աղօթքին մէջ՝ խնդրեց որ Իր բոլոր աշակերտները «մէկ» ըլլան: Ուղեւ աւելի, Ինքն իսկ զոհեց իր անձը՝ ամէնուն համար Իր կեանքը տալով...: Իսկ Իր Առաքեալներուն պատուիրեց՝ բոլոր աղբիւրուն քարոզել աւետարանական պատգամը, մարդկային զարմէն Աստուծոյ ընտանիքը կազմելու նպատակով, մինչ սէրը պիտի ըլլար՝ բովանդակութիւնը զայն կառավարող օրէնքին» (Gaudium et Spes, Ա. մաս, գլ. Բ. հմ. 32, ր-դ.):

5.- Եկեղեցւոյ դերը ներկայ աշխարհի մէջ

Սահմանադրութեան առաջին մասը կ'աւարտի Եկեղեցւոյ եւ աշխարհի յարաբերութիւններուն նուիրուած չորրորդ գլուխով: Եկեղեցին ի՞նչ կու տայ մարդկութեան եւ ի՞նչ կը ստանայ անկէ: Այս փոխադարձութեան սահմանումը կը պահանջէ, բնականաբար, մերձաւոր ծանօթութիւն մը երկուքին ալ ներքին ինքնութեան: Տեսանք, իր ամէնէն աւելի էական տարրերուն մէջ, թէ Եկեղեցին ի՞նչպէս

կ'ըմբռնե՛ մարդկութեան ներկայ վիճակը, ինչ ուղղութեամբ կը մտնենայ անոր դրած հարցերուն, ինչ գնահատանք կը տա՞նք անոր ներկայիս արժէքներուն հանդէպ: Բայց ի՞նչպէ՞ս կը դիմէ Եկեղեցին իր ինքնութիւնը, ի՞նչ գաղափար ունի ի՛ր մասին: Եկեղեցւոյ նուիրուած Սահմանադրութեան մէջ, որուն կարեւորութիւնը չեղտեցինք արդէն, կը գտնենք այս հարցումներուն զոհացուցիչ պատասխանը:

Ըսինք՝ թէ անիկա առանցքի մը դերը կատարեց Ժողովին ամբողջ գործունէութեան նկատմամբ: Ժողովի սկզբնաւորութեան, 60է աւելի պատրաստական նախագիծեր կ'առաջարկուէին Ժողովական Հայրերու քննութեան, շուրջ 2800 էջ, 2000 էջ աւելի՝ քան նախկին քսան Տիեզերական Ժողովներու արձանագրած գործը միահամուռ: Ծիր. Մոնթինի, իր 2 Դեկտ. 1962 թուակիր նամակին մէջ, ուղղուած Միլանի հաւատացեալներուն, հատու գիտողութիւն մը կ'ընէր. «Չափազանց ընդարձակ... բայց միութենէ զուրկ ատաղձ մըն է, որ պիտի կարօտէր զայն վերածելու եւ վերստին շարադրելու քաջութեան, եթէ հեղինակութենէ մը... ուղղուած ըլլար անոր տրամաբանական եւ յորինուածային պատրաստութիւնը... եթէ այդ ամէնի աշխատանքը առաջնորդուած ըլլար կառուցուածային հիմնական գաղափարէ մը եւ անոր շուրջ կեդրոնացած: Միութեան կորիզն է որ կը պակսի»²: 4 Դեկտեմբերին խօսք կ'առնէր Ժողովական սրահին մէջ՝ Պրիւքսէլի Արքեպիսկոպոս Ծիր. Սիւնէնս, որուն կատարած ելոյթը հանդրուան մը եղաւ Ժողովի պատմութեան մէջ: Յաջորդ օրն իսկ, Ծիր. Մոնթինի կը յայտնէր իր ընդհանուր հաւանութիւնը՝ Սիւնէնսի ելոյթին: Ծիր. Սիւնէնսի առաջարկը ամբողջութեան ծրագիր մը կ'ընդգրկէր: Հարկ էր, ըստ իրեն, իրբեւ մեկնակէտ առնել Ժողովին նպատակը. ասիկա, ինչպէս յայտարարած էր Յովհ. Ի. Սրբ. Քահանայապետը, Եկեղեցւոյ ներքին վերանորոգումն էր, մղուած՝ զայն մարդկու-

թեան ներկայ պահանջներուն եւ ակնկալութիւններուն մերձեցնելու փափաքէն: Ասոր համար անհրաժեշտ էր, ուրեմն, որ Ժողովին ուշադրութիւնը կեդրոնանար երկու կենսական հարցերու շուրջ. 1^o) Ի՞նչ է Եկեղեցին, ի՞նչ է այն գիտակցութիւնը՝ զոր ան ունի իր մասին. 2^o) Ի՞նչպէ՞ս կ'ըմբռնէ Եկեղեցին իր առաքելութիւնը՝ իր շուրջ գտնուող մարդկութեան նկատմամբ: Այսպէս, միութեան առանցք մը կը դրուէր Ժողովի գործունէութեան մէջ, եւ Եկեղեցւոյ նուիրուած Սահմանադրութիւնը կորիզային դեր մը կ'ունենար: Ժողովական գրեթէ բոլոր վաւերաթուղթերը կը պահէն ուղղակի կամ անուղղակի առնչութիւն մը՝ անոր հետ. կը ճիւղաւորեն, կը մասնաւորեն, կը յարմարեն Եկեղեցւոյ արտայայտած գիտակցութիւնը իր ինքնութեան եւ առաքելութեան շուրջ՝ անոր ներքին կեանքին եւ արտաքին յարաբերութիւններու գտնական ասպարէզներուն մէջ: Տեսնենք, ուրեմն, այդ Սահմանադրութեան մէջ պարունակուած էական տարրերը, որ իրբեւ ենթախաւ պիտի ծառայեն «Gaudium et Spes»-ի Դ. գլուխին:

Եկեղեցւոյ գոյութիւնը եւ գործունէութիւնը կը գետեղուին իսկոյն գերբնական մակարդակի մը վրայ: Ան հոգեւոր իրականութիւն մըն է, ամէն բանէ առաջ, որ կը ստանայ իր իմաստը՝ Քրիստոսի հանդէպ իր ունեցած յարաբերութենէն: Սորհրդական (sacramental) իրականութիւն մըն է Եկեղեցին, որ կը խորհրդանշէ եւ կ'իրագործէ մարդոց միութիւնը իրարու միջեւ եւ Աստուծոյ հետ. այս պատճառով՝ Եկեղեցին հայեցողմն է Քրիստոսի, պատմական շարունակութիւնը՝ Քրիստոսի անձին եւ գործին, որուն միակ վախճանը՝ մարդոց յաւիտեանական միութիւնն է Աստուծոյ հետ:

Կայուն իրականութիւն մը չէ Եկեղեցին: Անոր կեանքը կը թափանցէ պատ-

2. RENÉ LAURENTIN, L'enjeu du Concil, Bilan de la 3^e Session, éd. du Seuil, Paris, 1965, էջ 369:

մութեան մէջ, կը մասնակցի պատմութեան անցողարձերուն եւ ճակատագրին, կը հիւսուի իր անգամներուն թանձրացեալ զոյութեան հետ: Եկեղեցին՝ Աստուծոյ Ժողովուրդն է, որ կը պանդխտի ժամանակի մէջ. Ժողովուրդ մը՝ որուն յատկանիշն է ընդհանրականութիւնը: Ան իր քաղաքայինները կ'ընդունի անխտիր՝ ամէն ազգէ եւ ցեղէ. ո՛չ մէկ ազգ, մարդկային ո՛չ մէկ արժէք՝ օտար չեն համարուիր իրեն:

Եկեղեցւոյ այս զոյգ տեսակէտներուն խորհրդական ու ներուժային (dynamique) ընդգծումը կարեւոր նորութիւն մը կը նշանակէր վերջին երեք, չորս դարերու եկեղեցարանութեան վրայ: Չարերու եկեղեցարանութեան վրայ: Չափազանց կը շեշտուէր Եկեղեցւոյ տեսանելի եւ ընկերային կազմը: Մեծ հեղինակութիւն վայելող աստուածաբան մը հասած էր մինչեւ իսկ դրելու՝ թէ այնքան տեսանելի էր Եկեղեցին, որքան վենետիկեան հասարակապետութիւնը: Այս իւրացումը, մանաւանդ այսօր, մեծ երկդիրացում մը կըրնայ հանդիպել՝ Եկեղեցին մութեան մը կրնայ հանդիպել՝ Եկեղեցին իրբեւ մրցորդ մը ներկայացնելու քաղաքական հասարակութեան, երկրաւոր բնկերութիւններու շահերուն, ազօտացնելու՝ Եկեղեցւոյ իսկական գիմադիծը: Անոր յարաբերութիւնը երկրաւոր իրողութիւններու հետ կը զեկալարուի միշտ բարոյական տեսանկիւնէ մը՝ մարդուն արժանապատուութեան եւ ճակատագրին արժանապատուութեան, ինչպէս առիթը ունեցանք մատնանշելու գրութեանս սկիզբները:

Մարդիկ այսօր աւելի քան երբեք կը սպասեն Եկեղեցիէն ամբողջական նուիրում մը բուն իր առաքելութեան, որ պէտք է ըլլայ հարազատ վկայութիւն մը կրօնական եւ հոգեկան արժէքներու ներկայութեան: Աշխարհի ու Եկեղեցւոյ յայտնարեւոյթ այս փոխադարձ վերաբերումը սերտորէն կը շաղկապուի երկրաւոր իրողութիւններու օրինաւոր անկախութեան սկզբունքին հետ, զոր Ժողովը պաշտօնապէս կը յայտարարէր: Բայց կարեւորագոյն, մանաւանդ թէ կորիզային տարրը՝

որ այս տեսութեան մէջ կը ներփակուի, Եկեղեցւոյ զիրքն է մարդկային ընկերութեան նկատմամբ: Անոնք չեն նմանիր երկու հանրապետութիւններու, որոնք միշտ օտար կը մնան իրարու, յարաբերութիւններն՝ միշտ արտաքին: Եկեղեցւոյ եւ ընկերութեան միջեւ կենսական իրարխառնում մը տեղի կ'ունենայ. Եկեղեցին՝ ընկերութեան մէջ ապրող եւ գործող քրիստոնեաներն են: Եկեղեցւոյ այս վերանայական եւ միանգամայն ներմայաւուն դիրքը մարդկային ընկերութեան հանդէպ, հետեւեալ յաջող համադրութեամբ կ'արտայայտուէր Սրբ. Քահանայապետէն. «Եկեղեցին ամբողջապէս ձերբազատուած կը ներկայանայ երկրաւոր բոլոր շահերէ... Այս կը նշանակէ, ուրեմն, թէ ան կը մեկուտանայ աշխարհէ՝ զայն ձգելով իր բախտին, երջանիկ թէ ապերջանիկ: Ընդհակառակն. Ան չի հրաժարիր աշխարհի շահերէն, եթէ ոչ՝ աւելի ատակ դառնալու համար ընկերութեան մէջ թափանցելու, ինքզինքը տրամադրելու՝ հասարակաց բարիքին ծառայութեան, ընծայելու ամէնուն՝ իր օժանդակութիւնը եւ փրկարար միջոցները»³:

Ժողովը կը յիշեցնէ քրիստոնեայ հաւատացեալներուն՝ «Լաւ զանազանել, ի շահ նոյն ինքն փրկարար տնօրէնութեան, այն պարտականութիւններն ու իրաւունքները՝ որոնք կը դրուին իրենց վրայ՝ այնու որ մաս կը կազմեն Եկեղեցւոյ, այն միւսներէն՝ որոնք կը վերաբերին իրենց՝ իրբեւ անգամ մարդկային ընկերութեան» (Գաւանական Սահմանադրութիւն, «Եկեղեցին», Գլ. Դ. հմ. 36, դ.): Ժողովը կը յորդորէ միանգամայն որ ջանան «ներդաշնակօրէն հաշտեցնել զանոնք, յիշելով որ ժամանակաւոր ամէն գործի մէջ պէտք են քրիստոնէական խիղճէն առաջնորդուելը» (անդ): Այսպէս պիտի բերեն անոնք «իրենց նպատակ աշխարհի սրբակերտումին, ներսէն գործող խը-

3. Concile Oecuménique Vatican II, Documents Conciliaires, 3, éd. du Centurion, Paris, 1966, էջ 104:

